


ՏԱՅ ՍԿԱՆՈՒՄ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 12

24 ԱՊՐԻԼ 1920




ՀԱԻԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ

ՇԱԽԱՐԾ ՔՐԻՍՏԵԱՆ

Ե Ի Ի Ր

“ՄԱՐՄՆԱՄԱՐԶ”, ԹԵՐԹՐ



Հայ իրականութեան մէջ մարդական կեանքի նստածեղծարար ըլլալու առաջնութիւնը միակողմանի կերպով Շաւարշին տալով, մենք պատճառական սխալի մը մէջ ինկած կ'ըլլանք:

Յաճախ տեսնուած է որ ազգերու կեանքին մէջ երեւան եկած կարգ մը դէպքերու կամ երեւոյթներու հիմնադիրի արտոյտը կը արուի յաճախ կարգ մը անհասկերու՝ որոնք ուրիշներու հետեւորդներն են և սակայն իրենց քայլերը աւելի յանդուգն կամ օրիմիկալ ըլլալով կերպաւորած են անոնց իտէալները և թելադրած են հանրութեան աւելի լայն խաւերու մէջ ու գործնականացուցած են դանոնք:

Ահա այս վերջիններէն է Շաւարշ Քրիստեանը. ինք՝ ձեռք առաւ գործը այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ որ իր շուրջ չէին պակսիր բազուկի մարդեր: Գաղափարը կար ինչպէս և գործը, սակայն մենասէր և կղզիացած կերպով: Անէն մարդական խումբ ինքն իր մէջ և իր խումբին համար էր:

Շաւարշ գիտցաւ օգտուելի գոյութիւն ունեցող աստղձէն և մէկ տեղ հա. ա. քիւլով այդ տարբեր ուղղութիւնով ուժերը, բերաւ իր «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» թերթին մէջ ա կ ե ի ն գ:

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»ը եկաւ Հանակիրը ըլլալու հայ մարդական կեանքին, միութեան և համագործակցութեան լա. ա. գոյն կապը եղաւ ան տեղական և գաղթավայրի հայութեան մարդական շարժումին:

1911 Փետրվարին Ա. թիւը հրատարակ կ'ելլէր «Մարմնամարզ»ին: Մենք գաւառէն երբ ասացանք սոյն թերթը, կարծեցինք որ մի ա շ ա մը թերթերու նման պոլսական բողջական օգեւորութեան արգիւնք է այն, սակայն իր տեսակին մէջ նորութիւն էր, կեանք և շարժում կար անոր մէջ:

Շատերուն համար նորութիւն էր այն, «Մարմնամարզ» անունով թերթ... Էյ ինչ կրնար գրուիլ անոր մէջ... միթէ՞ կ'արժէր թեւորունգ շարժելու մասին թերթ հրատարակել...: Մենք կուտանք հոս այդ թերթէն հառուածներ որ կ'երեւան Շաւարշին իտէալները:

որոնցմէ շատեր այսօր, տակաւին, մեզ համար ևս իտէալներ են:

Ահա իր խմբագրա'աններէն հատուածներ, որոնք այսօր իսկ նոյնութեա կը կրկնելու պէտքը կ'զգանք:

«Այնպէս համոզուած եմ որ պատճառակալ փաստեր ունիմ որիչներն աչ համոզելու քե, այն ազգերը որոնք կ'ուզեն իրենց գոյութիւնը ապահովել բարգաւաճիչ ու զարգանալ, ըրայ փանառակալութեան, ըրայ գիտութեանց եւ ուսման մեջ, պարտաւոր եմ միտն ու մարմինը իր արտոյտը մը նկատել ու ըստ այնմ երկուսն աչ հաւասարապէս զարգացնել:

... Բայց ցաւիչն ու ըայր չեն բաւեր: Այսօր քրտանայ իրականութեան մեջ պակաս մը գոցելու համար, ձեռնարկած եմ հրատարակել ներկայ ամսաթերթը, որուն զղխատր նպատակը պիտի ըրայ հայերէն գիտողներուն հասկցնել քե ամեն բանէ առաջ մարդ ԿԵՆԴԱՆԻ մըն է, ու պարտաւոր է իր մարմինը ինամել ու բարեշուք:

«Մարմնամարզ» թիւ 1 1911 Փետրվար:

Բայց ո՛ր եմ մշակներ...

Այդ աղաղակն է որ կը հաւսնի ամեն կողմէ, քե արուարձաններէ քե գաւառներէ

... «Մշակներ հայրաքեցեք մեզի» կ'աղաղակեն անոնք:

Եւ մենք ստիպուած եմ խորհիլ...

... տեղի ունեցաւ հայկական ողիմպիականը. ան պիտի է որ կապերէն միւ ըրայ մեր ազգային միտքեան զաղափարին, տեսլիկի անջատումները ու աննկմէ առաջ եկած բոլոր պայտարներու արքած կսկիծը եւ բերած հակառակութիւնն պիտի է միանալու տեղ մը գտնել հայ գեղարուեստին ու հայ մարմնակրթականին մեջ. որովհետեւ աննկց բարիքը համայնական է...:

... Եւ Հայ Մամուլի մեկ մասը լուրսիւն կը պահէ մեր շարժումին հանդիպ. արդիօք ինչ է պատճառը. նիւրակալ փարձարութիւն կուզեն... այս շարժումը համազգային է եւ փարիչները նիւրակալ գոնողութիւններով կը վարեն զայն...:

... Յարմով ստիպուած եմ խոստովանիլ քե Պոլսոյ մեջ տակաւին կանոնաւոր հայ մարմնամարդական ակումբ մը գոյութիւն չունի, անտուտ ակումբ բար իր իսկական իմաստովը



ՇԱՒԱՐԵ ԿՐԻՍՏԱՆ

նկատի առնելով. հոս ու հոն կազմուած են երի-
սասարդական մարզական խումբեր որոնք կը կա-
սարեն որոշ մարզակներ եւ սակայն այս միու-
թիւնները անցսօրհն չեն կրնար հաստատանի
արդիւնքը տալ եւ նիւթական վիճակինն ալ չի
ներեւ մեծ գործեր ընելու . . . :

Բազմաթիւ անգամներ ըսած եւ որ Երոսպա-
յի եւ Աւերիկայի մէջ մարդ մարզակ չը կասա-
րելու համար կաւ խենք կաւ անդամաւորոյժ ըլլա-
լու է: Հոն հիւանաչի կահաւորումով մարզարան-
ներ կան, ուր մարդ կրնայ իր ամենօրեայ մար-
զակնքը տուլ եւ մասածը ընել: Մեկ աղիւս Ժո-
ղովուրդ ենք, սակայն մեծնալ, հարստանալ ուզող
ազգ մը հետատուտ ըլլալու է իր վիճակին մէջ
ցանկալու թէ գորութիւնը միութեան մէջն է . . . ա-
կումներու միութիւն մը շատ աւելի գորտուր պի-
տի ըլլայ քան այդ ախումբները իրենք իրենցով:

Արդ մեկ այսօր կուզակ այն եզրակացու-
թեան թէ այն ախումբները իրարու մօտ ցան եւ
կազմեն ընդհանուր հայ մարմնամարզական մի-
միութիւն մը եւ ասով կարենան միօրինակութիւն
տուալ թերեւ թէ մարզակնքի ձեւերու եւ թէ վար-
չութեան մէջ . . . :

. . . որքան աշեն որ չընթանենք թէ «Մեկը
ամենուն եւ ամենքը մեկուն» վարդապետութիւնը.
չենք կարող ազգային օգտալար ձեռնարկներ
յաջողցնել ու ասոնց գլխաւորներուն կարգին է
«ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻ-
ՈՒԹԻՒՆ»ը:


*
*

. . . Կը պահանջեն որ Պատրիարքը Եպար-
տիսին եւ Ներսիս Գործոց նախարարին ֆոյին ան-
պակաս ըլլայ եւ Ա.Գ.Ա.Զ. հայոց կեանքին ապա-

հովութեանը հաւար, մեկ հակառակը կը խորհիմք եւ կ'ըսենք. «Հայոց Պատրիարքին տեղը առաւելապէս պիտի ըլլայ հայ երիտասարդութեան ֆոնդը, այն երիտասարդութեան որ չուզէր զարու վարժուիլ, այլ կը փաժուի նիզի, պայքարի խընդարու: Չը բաւեր Հայուն միայն մի շար բնիչը, այլ անհրաժեշտ է նաեւ անոր չը շար եւ խնդար սորվեցնելը: Ահա այս բանն է որ մեկ ձեռնարկած ենք ընել եւ օրուան կարողիկոսը, Պատրիար-

Տեղակալն եւ նիքակալն դժուարութիւններու մեքէն զուտոյի հայութիւնն էր որ զգուց մեր գաղափարները եւ զանոնք սարածելու հաւար կազմեց միութիւններ... այս երկոյցներէն թւադրուած, սարգայի մեր գործունեութեան զըխաւոր առանցքը պիտի կազմէ զուտը...»:

Նախատակ հայրդի, այսօր մենք ալ ճիշդ նոյն այս աղերսունքներուն և ակնկալութիւններուն մէջ կը գտնուինք: Մենք ալ ստիպուած ենք տարբեր դարձուածքներով ու քիչ փոփոխութիւններով նոյն նախապատ. թիւննելը շարնը մեր թերթին մէջ: Ահա խնդրանքներ, ամէն կողմէ մարզիչ ուսուցիչներ կ'ուզեն. տարբեր տարբեր հաստատման միութեան կապի մը պէտք ունին, մամուլը իր գրիչը շարժելու համար խնդրանք կ'ուզէ. տակաւին կարգ մը



ՇԱՒԱՐԸ ԿՐԻՍՏՈՍՆ



ՇԱՒԱՐԸ ԱԿԱՈՒՏԻ ԵՐԵՎԱՆԻ

ը, մտանոտակալն, անեկը մեզի պէտք է աջակից ըլլան, որովհետեւ մեկ կ'աշխատիմք յառաջ բերելու միզ, մեր նպատակն է կեանքի պայքարը վերածնութեան գործին մէջ եւ ազգին փրկիմքն ապահովութիւնը...:

... Մեր իտակներուն իրականացուելը մեծաւ մասաւր զուտոյի երիտասարդութիւնն է կ'ակնկալենք, մեր նայուածքը հոն ուղղուած է որ պիտի կեդրոնանանք հոն...:

Մարզական ակումբներ իրենց ետին վրայ կը յամառին: Իսկ մենք զաւառ չունինք այլեւս, մեր ամբողջ յոյսը կեդրոնացած է մեր որբերուն վրայ որոնք պիտի կազմեն ապագայ զաւառացիներն ապագայ անկախ Հայաստանի քաղաքացիներն:

Հէ՛ք Շաւարշ չը կրցար հասնիլ քու իտակիդ, միայն հոգիդ թող հրճուի տեսնելով այն երազեղ իրագործուած որ էր հայ Մարմնակարգական ընդհ. միութեան մը կազմելը, այսօր մենք արդէն իրագործած ենք գայն կազմելով ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ: Եւ այն ընկերներդ որ քու շուրջդ բուրուած քեզի կ'աջակցէին ու կը քաջակերէին կը շարունակեն իրենց արգասաւոր աշխատանքը աւելի լաւ կազմակերպուած և աւելի ընդարձակ հողի վրայ: Պէտք էր որ դուն ողջ ըլլայիր իրենց թուր թեթեւցնելու համար:

Հանգիստ ըրէ այլեւս, նահատակ տղայ, յիշատակդ ապահովեցիր հայ մարդական պատմութեան մէջ՝ քու ՎԱՆՄԵՍՄՍՐՁօովդ: Այդ յիշատակդ չեն կրնար ջարդել քու Աէլիմ Սըրբիներուդ հայրենակիցները . . .

11 Ապրիլ 1920

Կ. Պ ՈՒՇԱԳԼԵԱՆ

ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆ

«Հայ Սկաուտ» թերթին Պատ. խմբագրութեան կողմէ դիմում կ'ըլլայ ինձ որպէս զի Շաւարշ Քրիստեանի յիշատակին նուիրուելիք թի ին փոքրիկ գրուածքով մը մասնակցիմ:

Ինչ կը սպասէք ինձմէ, թերեւս յուշեր. բայց նկատելով որ իբր իր եղբորորդին շատ աւելի ծանօթ եմ իւր կեանքին՝ քան ոսկէ ուրիշ անձ և թէ իմ իրատեսութիւնս է ծանօթացնել զինքը բոլոր ունեց որոնք զինքը չեն ճանչցած և միեւնոյն ժամանակ վերջիչել տալ զինքը իր ընկերներուն և դարեկամներուն՝ կ'ուզեմ Շաւարշ Քրիստեանի կեանքը և գործը պարզել ընթերցողներուս, ինչպէս նաև յարգանքի պարք մը մատուցանել իր յիշատակին:

Նախ մի քանի կենսագրական նօթեր.

Շաւարշ Քրիստեան ծնած է Պէշիքթաշ 22 Յուլիս 1886ին: Աշակերտած է նոյն թագի Մաքրուհեան երկսեռ վարժարանին: 1897 Սեպտեմբեր 6ին իր եղբայրը բժիշկ Քրիստեան զինքը կ'ուղարկէ Պարտիզակ, մըսթր 2էմպըրսի անօրէնութեան տակ գտնուող Ամերիկեան Բարձրագոյն վարժարանը՝ վերջը Կ. Պոլիս կը վերադառնայ Սկիւտարի Պէրպլրեան վարժարանը իբր զիշերօթիկ, յետոյ Ռօպէրթ Գօլէճ կը մըտնէ որմէ ետք, մարմնակրթութեան մասին զգացած բուռն փափաքէն մզեալ՝ Փարիզի Լիսէ Ժանսօնի վարիչ Մ. Տէպօնէլի հետ թղթակցելէ վերջ, եզրօրը կ'առաջարկէ որպէս զի զինքը հոն ուղարկէ, ըսելով որ մարմնամարզի ուսուցչի վկայական ստանալով կ'ուզէ հայ ազգին նոր սերունդին ֆիզիքական կրթութեամբ տարել: 1906 Յունիս 22ին է որ Քրիստեան կը մեկնի Փարիզ, Լիսէ Ժանսօնի վեց ամիս աշակերտելէ վերջ, անօրէնին անձէն և վարժարանին դուրսէն դժգոհ ըլլալով Լանտոն կ'անցնի, ուր Մր. Սանտօի երկու քուկէս տարի աշակեր-

տելէ վերջ մարմնամարզի ուսուցչի վկայականը ստանալով 1909 Յուլիս 19ին Կ. Պոլիս կը վերադառնայ: Զանազան վարժարաններու մէջ պաշտօնավարելէ և մասնա: որ դասեր ստանձնելէ զատ Կ. Պոլսոյ այլ և այլ արուարձաններու մէջ,



ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆ

ջանադիր եղած է մարմնամարզական ակումբներ կազմելու: 1911 Փետրուարէ սկսեալ հրատարակած է «մարմնամարզ» պարբերաթերթը, որ չորս տարուան կեանք մը ունենալէ վերջ, իբր հետեւանք քաղաքական դէպքերու ընդհատուած է:

Յոյր անոնք որ զինքը ճանչցած են անշուշտ զարմանքով պիտի իմանան որ Քրիստեան իր տղայութեան ընթացքին իր ճղճիմ և տկար մարմնով և վատթար առողջութեամբը միայն հոգ պատճառած է իր ծնողքին և հօրս, որ իրեն համար երկրորդ հայր մը եղած է: Իրենց

միակ մտահոգութիւնը եղած է, հիւանդկախ Շաւարշին ամէն կարելիութիւն տալ որ ան կարենայ ամէն կարելի միջոցներով երկաթեայ առողջութեան մը տիրանալ: Բոլոր այն անդարար ուտելիքները և դեղերը որ իր կոկորդէն վար կը լեցնէին՝ անոր կազմին մէջ ու է փո-



Շաւարշ Բրիսեան թօմսայ

փոխութիւն յառաջ չէին բերեր և միայն իր չուրջիներուն հոգերուն աւելնալուն կը նպաստէին: Բարեբախտարար Բրիսեան հետզհետէ հակում մը դէպի մարմնամարզը ցոյց տալ կը սկսի, և իր փափաքին զահացում տալու համար անմիջապէս գործի կը սկսի: Իրացիները որոնք ամէն օր իր փորձերուն ականատես կ'ըլլային, ծնողքին մօտ կը միջամտեն և այդ այլանդակ շարժումներուն արգելելու պէտքը կը զգացնեն, առարկելով որ այդ փորձերը Շաւարշի նախագ մը ըլլալու իբր հետեւանք պիտի ունենան, թէ անոր արդէն փափուկ առողջութեանը վատթարացման պիտի նպաստեն, թէ ան իր մէկ կողմը պիտի կտորէ, թէ ան անառակութեան պիտի վարժուի և այսպէս իր ծընողացը առջև մտահոգութեան նոր դռներ պիտի բացուին:

Աւելորդ է ըսել թէ Բրիսեան իր փորձերը

յարասեւօրէն կը շարունակէ, որովհետեւ անգամ մը որ ու է մէկը իր մարմինը կ'ենթարկէ մարմնամարզական զանազան վարժութիւններու, մարմնամարզի գեղեցկութիւնները և անոր քաջողական յատկութիւնները իրեն այնքան ամուր կերպով կը կապեն զինքը որ անկէ բաժնուիլը անկարելիութիւն մը կը դառնայ: Միւս կողմէ Շաւարշի ծնողքը իր առողջութեանը մէջ դէպի բարելաւում ձեռք բերած արդիւնքները տեսնելով, ոչ թէ կ'արգելին իրեն այդ փորձերը ընել՝ այլ միայն կը քաջալերէն զինքը սոյն վարժութիւններուն մէջ յարասեւելու համար: Ահա հոս մարմնամարզի արդիւնքներուն մասին սկեպտիկներուն կասկածները փարատելու սահմանուած լաւ նմոյց մը:

Ձեռք բերուած արդիւնքներէն ամէնէն աւելի ապշողը թերեւս նոյն ինքն Շաւարշ Բրիսեան եղած ըլլայ. ամէն անհատի վրայ իսկ կատարած փորձերովը համոզում գոյացնել վերջ քսանամեայ երիտասարդը աւելի յառաջ գացած է. նա ըմբռնած է որ մարմնակրթութիւնը անհատականէ աւելի ազգային բնոյթ մը ունի. կարող է հայ ազգին ազատագրմանը մէջ կարեւոր ազդակ մը ըլլալ և թելադրուած այս գաղափարէն ընտրած է Նա իր ապագայ ասպարէզը:

Փարիզի և Լոնտոնի մէջ երեք տարուան յարասեւ աշխատութեամբ ձեռք բերած մեծ խանդավառութեամբ գործի կը սկսի: Չը գոհանալով միայն վարժարաններու մէջ պաշտօնավարել Բրիսեան կը ջանայ մարմնակրթութեան ճաշակը և սէրը մտցնել հայ ազգին ամէն մէկ խաւին և դասակարգին մէջ և այդ մտօք ջանադիր կ'ըլլայ զանազան թաղերու և արուարձաններու մէջ՝ մարմնամարզական աղուժներ հիմնելու, որոնց հրահանգումի հոգը ինք իսկ կ'ըստանձնէ: Մարմնակրթութիւնը տարածելու բուն փափաքէն մղեալ Բրիսեան ոչ մէկ արգելքի առջև կ'ընկրկի. այսպէս ան մի քանի համախոններու աշխատակցութեամբ դըժուարին պայմաններու տակ կ'սկսի հրատարակել «Մարմնամարզ» անուն թերթը որ այնքան կարեւոր ազդակ մը եղած է սոյն շարժման յառաջացման: Ան՝ անձնուէր բարեկամներու ընկերակցութեամբ կը կազմակերպէ հայկական առաջին ողիմպիականը որուն և յաջորդներուն նպատակը պիտի ըլլար ցեղին բարոյական և ֆիզիքական ազնուացման սատարել և հայ երիտասարդութիւնը մէկ հաւաքավայրի մը մէջ իրարու քով բերելով անոնց մէջ համաձայնու-

թեան և համադորժակցութեան ոգին արծարծել, Դարձեալ Քրիստոսի նախածնունդութեամբ է որ մեր մէջ սկսուտութեան հիմը դրուած է որ այսօր մեր պատանիներուն իմացական, բարոյական և ֆիզիքական դաստիարակութեանը մէջ այնքան կարեւոր տեղ մը կը գրուէ. Աւելցրնեմ որ այս ուղղութեամբ ալ Քրիստոսի վեհ, հովան սգնողներ գտնուած են:

Շաւարշ Քրիստոսի նահատակուեցաւ միայն այն պատճառաւ որ քաջութիւնը ունեցած էր



Շաւարշ Քրիստոսի մանկութիւնը

նուիրուելու իր ազգին: Մենք մեր տօնն մէկ զո՛րին հանդէպ վիրտ մը ունինք մեր սրտին խորը: Բայց մեր կակիժը նոյնքան դառն է որքան մենք տեղեակ ենք իրողութեան մը, որ քիչերու միայն ծանօթ է:

Եւրոպայի մէջ համաշխարհային պատերազմին պայթելուն, Շաւարշ Քրիստոսի մի քանի ընկերներով ֆրանսական բանակին մէջ կամաւոր արձանագրուելու մտադրութեամբ կը դիմէ կ. Պոլսոյ ֆրանսական հիւպատոսարանը ուր իր առաջարկը լաւ ընդունելութիւն գտնելով, ան կը յաջողի մէկ քանի օրուան մէջ անցողիք և ճամբորդութեան սրտօնագիրը ձեռք ձգել: Բժըշ-

կական փոքր զորձողութիւն մը պատճառ կ'ըլլայ իր ճամբորդութեանը, յապաղում մը որ այնքան ճակատագրական հետեւանք մը կ'ունենայ:

Յարգանք, յիշատակիդ, հօրեղբայր:

Քու երազի ճանապարհիդ վրայ, քու իտէլիի բարձունքի գագաթին իսկ չի մօտեցած, զո՞ գացիր ճակատագրի անողոք հարուածին, զո՞ գացիր, որովհետեւ դուն ըմբռնեիր էիր ազգիդ ապագայ ճակատագրին վրայ քու ասպարէզիդ ունենալիք բարձր կարեւորութիւնը, որովհետեւ վատ թշնամին լաւ գիտէր թէ քու կատարած դասալստութիւններդ նոյնքան կարեւոր էին որքան մեր մտաւորական ուժերուն աշխատութիւնները որոնց նպատակն էր հայ ազգին ազնուացումը, զարգացումը, անոր իտէլիին իրականացման զո՞ գացիր, որովհետեւ քու տուած ամէն մէկ մարմնամարզական հրամանդ կարծես նեա մըն էր ուղղուած դէպի թշնամոյն սիրտը, որուն պատճառաւ ցաւին ազդեցութեանը տակ ան ակռայ կը կճռտացընէր:

Հանգիստ ոսկորներուդ:

Մենք քու զործիդ վրայ հիացողներս, մենք քու աշակերտներդ, ուխտեցինք յաջորդներդ ըլլալ և յառաջանայ այն ճամբէն ուրկէ դուն քաշեցիր և բարձրանայ դէպի այն բարձունքները ուր դուն կը ձգտէիր հասնիլ, և եթէ օր մը մենք քեզի ներկայանանք և դուն մեզէ հաշիւ պահանջես, այն ատեն վստահ եղիր որ մենք ճակատնիս բարձր, համարձակ քայլերով դէպի քեզ պիտի յառաջանանք և մեր ուղիդ կեցումքը և պայծառ նայուածքը բաւական պերճախօս պիտի ըլլան քեզի ըսելու թէ մենք մեր պարտականութիւնը ոյժերնուս ներած չափովը կատարած ենք և քու և ընկերներուդ երազը իրականացած է:

Յարգանք յիշատակիդ:

Յերա, 11/24 Ապրիլ 920

ԱՐՄԵՆԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ



ԲԱԶՈՒԿԻ ՄԱՐԴԸ

ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆ



Աշխարհաստան պատերազմին ընթացքին զոհուող ու նահատակուող մեր ժողովրդեան հասարակ դասակարգին հետ, փոքր չէ այն թիւը որ մեր մտաւորական-գրական դաս կը կոչուի: Ոճիրը, խտրութիւն, զանազանութիւն չէր կրնար դնել նաև գրչի ու մտքի մեծ ու փոքր վարպետներուն, ձիրքի ու կոչումի տէր՝ գիտակից երիտասարդութեան: Ընդհակառակը իր լայն, մեծղի երախը բացած նախ զանոնք կը լափէր, կը լափլիզէր իր անյագ, անկուշտ որովայնին կերը ընելով մեր ապագայի յոյսերն ու երազները:

Այդ նոր սերունդի ֆահակիրներն այսօր անմահացած են մեզ համար թէև և անոնց անյայտ գերեզմանները ու վայրերը մէյ մէկ սուրբնու ուխտատեղիներ պիտի լինին մեզ և թէ ապագայ ցեղին, և հսկայ կոթողներ հայտ սրտերուն մէջ, սակայն դառն է յիշել թէ անոնց պէտքը, մեր կարիքներուն, անոնց մահը մեզ ողջերուս շատ քան պակսեցուց Ազգային արժէքներուն շտաբէն:

Նշանաւոր ու ակնայայտի մեր տաղանդաւորներուն հետ, որքան ալ ո՛վ գիտէ դե՛ռ աննշան և ծածուկ ընծիւղներ, բողբոջներ խեց, արմատախիլ ըրաւ սատակաշունչ և անարկու փոթորիկը որոնք յսուաջիկային, մտաւոր ապագայի մէջ մէյ մէկ աստղեր փայլէին թերեւս, տարաբաղդ ցեղին դիտուն վրայ, և ի վերջոյ սիւները կազմէին նորակերտ հայրենիքին —

Գացին ու ալ չեն գար...

Այդ գացողներուն մէջ գտնուեցաւ մեր դժբաղդ Շաւարշն ալ: յուշերով գրաւուած՝ կարելի չէ որ չյիշեմ իր անունը: Իր դէմքը գրասեղանիս առջև, իր յաղթ կեցուածքով և հուր աչքերով:


Իր սիրտը զեղուն էր Ազգային վերածննդեան գործով և պատրաստ անոր ծառայելու, նուրի բելու անձը, բոլոր ուժն ու կարողութիւնը:

Կը յիշեմ իր սա խօսքը Եմիղիքական կըրթութեան տուած ծառայութիւնները և օգուտները չեն սահմանափակուիր անհատներու մէջ միայն այլ և ամբողջ Ազգը ատոնցմէ կ'օգտուի: որովհետև ներկայ սերունդը փիղիքապէս զօրացնելը ապագայ զօրաւոր սերունդներ ապահովել է:

Ահա՛ քու այդ նշանաբանդ կ'իրագործուի այսօր Դու յաջորդներուդ յոգնաջան աշխատութեան շնորհիւ, սակայն Դուն չպիտի տեսնես զայն խեղճ Շաւարշ:

ՄԻՍՏ.Ք ՍՍ.Գ.ԻՍԵԱՆ

ՇԱԽԱՐՇԸ



Երբեք չեմ կրնար զուգորդել թախծող մահը՝ Շաւարշին շէնչող բնաւորութեան հետ:

Ան՝ գերազանցապէս արեւմտեան թիփ էր իր խառնուածքովը: Խնդա՛լ, կատակել, չարածճի խաղեր սարքել ամենուն և վերջէն՝ ետ քաշուիլ քահքահ խնդալու համար անոնց վրայ:

Ես չը տեսայ զինքը երբէք տխուր ու թախծող, եթէ երբեմն կախերես էր ան—հազուադէպ պարայայ — անպայման խաղ մը կար տակը և կամ՝ ազար-նատէրէն կու գար, իր մի քանի ոսկիի պարտքէն ընկճուած... Ի՛նչ ընէր խեղճ տղան, հայերու մէջ թերթ հրատարակել մուրացկանութիւն ընելէն գէշ է, որովհետև այս վերջինին զրամագլուխը միմիայն երեսի պինտ կաշի ունենալուն մէջ կը կայանայ, իսկ թերթի վարչութիւնը երեսի կաշիէ զատ քսակ ալ կ'ուզէ... և սակայն նոր կատակի մը առջև շուտ կ'անցնէր Շաւարշին այս ամպոտ բուպէն:

Իր կատակները երբեմն փափկանկատութեան սահմաններէն խոյս տալու չուփ առաջ կ'երթաթային, և դիմացինը՝ եթէ անգիտակ ըլլար իր բնաւորութեան, վիրաւորուելու միամտութիւնը կ'ունենար՝ որ մեր չարածճին նոր սիրուն կատակով մը անմիջապէս կը վահանէր նախորդը! Ես որ վարժ էի իր կատակներուն աւելի ճիշդը իր անկեղծ բնաւորութեանը, երբեմն կ'ստիպուէի ակոսա սեղ ինչ իր չափազանցումներուն և քիչ մը ամիլէթի ոգիին խոտոր համեմատող ընթացքներուն, սակայն կը ներքի իրեն այդ չեղումները, նկատի առնելով իր չափազանց շարժուն — եռուն բնաւորութիւնը...

Շատ անկհոյսներ կան իրմէ, որոնք հոս թուել պիտի ուզէի սա սեւ էջերը քիչ մը կապտացնելու համար, սակայն այս փափաքս փափաք պիտի մնայ, թերթիս էջերուն անթոյլատրելիութեանը առջև:

Ինք գերազանցապէս սրօրքսմեկի խառնուածք ունէր, կ'ուզէր ամբողջ աշխարհը զուարթ և կատակող տեսնել Մտահոգութիւնները իրմէ փախուստ կուտային պէտք եղած լուրջ ընդունելութիւնը չը գտնելով և ասով ան՝ միշտ երիտասարդ ու կայտառ կը մնար ու պիտի մնար:

Երբ ամէն երիտասարդ զինւորական խնդրով ծակէ ծակ կը շուէր, ինք՝ մեծ հօրմէ մնացած Պարսկական պարսաչ անցազրի մը կռնակը տալով, անհոգորէն կը թափառէր հրապարակի վրայ,

մինչև որ այն սև գիշերը վրայ հասաւ ու զինք իր այդ Շահնշահին սեսերաբարձ առիւծ զինանշանով կնքած բաւրօրովը Այալ տարին !!...

Այդ տեղի կեանքէն անկէտղանքը պէտք է պատմել տալ իր ընկերներուն որոնք աւելի ճարպիկ գանձուելով օձիգ տղատելու ուրբորը կոտրեցին Շաւարշին վրայ.....

Շատ հետաքրքիր էի գիտնալ իր վերջին ժամը, այն սուկալի ժամը ուր ամենագուարթ, մարդը՝ զուարթութիւնը ինքն իսկ՝ կը մթազնի. ես չիպիտի հաւատամ որ ան տաժանքոտ ու թախծող մեռաւ. ես շատ բնական կը գտնեմ որ ան ամենավերջին սրամիտ կատակը շարտած ըլլար իր դաժան դահիճին երեսին, ու իր աշխոյժ աչքերը ու յստակ գէժքը այդ կատակին ծամածրուութեան տակ գիւականացած ըլլան...

Կ. ՊԵՏՈՒՇ

ԱՆՑԵԱԼ ՅՈՒՇԵՐԷՍ

ՄԵԼՔՈՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Անձնագոհութեան ճշմարիտ արժէքը, շափր որոշելու համար, պնդածեղա է նկատի առնել ի մէջ այլոց նաև զոհողին տարիքը:

Մեծ, փորձառու, և աշխարհի կեանքին դասը առած մէկը երբ ու է ազգօգուտ ձեռնարկի կը զօնէ իր անձը, անշուշտ գնահատելի է, իսկ երբ այդ զոհողութիւնը կը կատարէ պատանի մը. որմէ երբէք ալ իրաւունք չունինք այդպիսի պահանջ մը ընելու. նկատի առնելով տղուն անշափահասութիւնը, այդ ատեն է որ հերոսը կ'աստուածանայ:

Նախորդ յօդուածներէս մի քանիներուն մէջ հայ սկաուտը հանդիպած է Մելքոնին ու ճանչցած անոր ներքին մարդն ու դաւանանքը:

Իննըսունական թուականներուն է, Մուշն ու սասունը կ'ապրին իրենց ամենօրեայ արիւնի կեանքը, որուն մկրտութիւնը ժողովուրդին բոլոր խաւերը կը պատուաստէ վախին ու վատասեռումին դէմ:

Մելքոնը այդ արիւնին սնունդն էր:

Ու օր մը, փառքի և սարսափի օրերէն մէկը, լուր կ'առնենք որ յեղափոխականները թարգմանչաց Վանքին մէջ պաշարուած են, հոս է որ իսկոյն կը յայտնուի զոհողութեան ողին:

Գիշերով, ի մէջ այլոց վանք կը դիմէ նաև Մելքոնը, իր ծառայութեան բաժինը բերելու հայ դատին՝ դեռ 13 տարեկան հասակին:

Առաջին յարձակումին գիշերը երբ տակաին դիրքերու կարգադրութիւն ալ չէ եղեր, մերոնք անակնկալի կուգան, ու ամէն մէկը կը վազէ վանքին տանիքը ու կը սկսի մթութեան մէջ կոուրի արտաքին թշնամի զօրքերուն դէմ:

Վանքին արեւմտեան պատը կը մնայ միայն Մելքոնի վրայ, ինքն է որ մինչև լոյս կը դիմադրէ քաջաբար, առանց օգնակոտն ազելու. և արշարոյսին, երբ տակաւին թշնամին իր սատկածները չէր փոխադրած Մելքոնի գնդակով 17 դիակ համրուած էր վանքէն:

Մելքոնը երկրորդ անգամ կը գտնենք սահմանի վրայ, սուրճանդակի ծառայութեան մէջ, որ մէկուկէս տարուան իր տաժանելի կեանքին ու գործնէութեան յիշատակը անջնջելի կերպով քանդակեց զինքը ճանչցող և իրմով հետաքրքրուողներուն սրտին մէջ, և վերջապէս, օր մըն ալ նորէն ինկու գարանակալ խեբուսն ձեռքը ու անպատմելի շարշարանքներով փոխադրուեցաւ Մուշ, ուր սկսեց իր դատավարութիւնը:

Թուրք փոլիսն ու քոմիսէրը ծեծ ու շարշարանքով իսկ ոչինչ կարողացան կորզել իր բերնէն, հակառակ որ իր արդէն տանջուած մարմինը սկսած էր քայքայիլ, չկարողանալով սոկալ չափազանց ու իր ֆիզիքականին անհամապատասխան տանջանքներուն:


Կեանքը տղիսն ոչ մէկ բան կ'ըսէր, նոյն իսկ առաջին անգամուան իր փախուստի ու փախցնողներու մասին, այնպէս որ Եզիզէն, ալիբոստ հագուստները ևն, բոլոր անլուծելի գաղտնիք մնացին թուրք կատավարութեան, և վերջապէս Մելքոնի քար լուծեցէն կատաղած ու փրփրած, թուրք աղբը իր գաղանթութիւնը խառնելով այն պատառին որ իրենց տունէն էր գնացեր իրեն, քանի մը ժամ վերջը Մելքոնի անշունչ ու կապտացած դիակը կը յանձնէր հայոց, հայ գերեզմանատուն թաղուելու համար:

Տասնեակ տարիներ վերջ, այսօր, ինձի, իր սրտակից ընկերոջը բաժին ինկաւ իր մասին այս մի քանի տողերը գրելը, փափաքելով որ Հայ Սկաուտը իր բացնէ իր մէջը Մելքոնի կեանքըն ու դաւանանքը, որովհետև ես հայ սկաուտ ըսելով չեմ հասկնար այնպէս ինչպէս Անգլիացի

սկառուարը, որ դաւաւն է ազատ ու բարգաւաճ հայրենիքի մը, որուն գոյութեան ոչ ոք կը սպառնայ և որ ընականն եղանակով կը տանի իր կեանքը, ո՛չ, հայ սկառուտի կեանքը դատապարտուած է անցնելու հայ կեանքի մը պէս, տաժանքոտ ու արիւնոտ, անիկա այս օրերէն իսկ ճաշակեց ու դեռ պիտի ճաշակէ թշնամիներուն թոյնը, ու եթէ ինքը հիմակուրնէ չպատրաստուի Մելքոնի կեանքին, դատապարտած պիտի լլայ դամուելու անարգանքի ու անպատուութեան սիւնին, որովհետեւ այդպիսին չպիտի կարենայ պետք եղածին պէս պաշտպանել իր հայրենիքը գազան թշնամիին դէմ:


Համբոյր Մելքոնի հողաթումբին ու թող ամէն հայ սկառուտ իր սրտին խորը անխառն յիշատակ մը և առաջնորդող աստղ մ'ունենայ անոր անձնագոյն հայրենասիրութենէն:

ՄԻՍՅԱՆ ՆԱԼԹԱՆԳՆԱՆ



ԳԱԼՈՒՍ ԱՐԻԱՆԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ



Տարարազդ Գալուստին ոսկերտութն ալ անոր այնքան գուրգուրանքով սիրած ազգակիցնէրուն մարտիրոսագրութեան ածիւններուն խառնըւեցաւ. աւա՛ղ անձանթ գերեզմանին վրայ չկրցինք ծաղիկ մը դնել, ինք որ կը շնչէր ծաղիկներ պարգևելու համար իրեն կաթի տեղ արիւն ջամբած ազգին:

Գալուստը դժբաղդաբար անձանթ դէմք մը կը մնայ հայ մարնամարզական աշխարհի մէջ, սա միակ պատճառաւ որ անոր նման խոնարհ նկարագրի, խոնարհ ծագումի տէր վեհ հոգիներ իրենց կեանքի հաճոյքը և երջանկութիւնը կը փնտռեն լուս գործունէութեան մը մէջ և սնտաի պարծենկոտութիւններով չեն ուզեր ուրիշ ներէ փոխ առնուած լոյսերով փայլիլ: Եէնի Գաբուի և շրջականերու հայ երիտասարդութիւնը շատ լաւ կը ճանչնայ զինքը և մասամբ մխիթարուած կ'զգամ ինքզինքս, Գալուստի կորուստէն վերջ տեսնելով որ անոր սէրը դեռ կ'ապրի, անչէջ. իր ընկերներուն սրտերուն մէջ:

Գալուստ Արիանեան, բարեկամ մարզաւէրներու ազնուագոյններէն մին, Եէտի Գուլէի

որբանոցին, իրեն կեանք տուողներու սև բացակայութեամբ գիշեր ցորեկ տանջուող, աշխատագէր որբուկ մըն էր. ինձ ըսուեցաւ թէ՛ այդ օրերուն իսկ իր շուրջ ստեղծած էր համակրան



ԳԱԼՈՒՍ ԱՐԻԱՆԵԱՆ

քի շրջանակ մը ու իրեն նման դժբաղդ վիճակակիցները յաճախ անոր շուրջ բոլորուելով, թէ խաղի և թէ վիճարանութեան ատեն մտիկ կ'ընէին անոր ազնիւ ու եղբայրական խրատները, ու տեսնելով անոր մէջ անձնութեան անկեղծ հուրը, առանց Գալուստի անոնք ոչինչ կը կարծէին ինքզինքնին: Գալուստ երբ որբանոցէն կ'ելլէր, կոչկակարութեան արհեստը իրացուցած ըլլալով, սկսաւ իր ապրուստը հոգալ: Առատուրնէ մինչև երեկոյ շարաշար աշխատելէ վերջ, երբ ալ աչքերուն լոյսը կը հատնէր, դուրս կը սուր սր Գալուստը իր պատիկներուն, իր խումբին միանալու համար:

Անո՛ւ ատոնց մէջ է որ անոր աստղը փայ-

լեցաւ, այնքան հրաշալի ճառագայթներով: Իր գլուխը ժողուելով Գամ-Գարուի, Ենի-Գարուի փողոցները սլքտակալու, մութ անկիւնները մութ գործերով զբաղելու դատապարտուած Հայ աղփաս երիտասարդները, անոնց ֆութպոլ կը սորվեցնէր կը քաջալերէր զանոնք գնդակներ հայթայթելով: Վերջապէս, կարելին կ'ընէր իր ազդեցութեան տակ հաւաքելու կարելի եղածին չափ շատ թիւով երիտասարդներ, մարզանքի մաքուր ոգին և խաշերու մէջ իրարու հանդէպ ազնիւ գտնուելու բնութիւնը արմատացնելու համար: Գալուստը ըլլալով որք մը, գիտէր լքեալի մը գրկանքներուն ծանրութիւնը. ձկնորսներու, կօշկակարներու և նմանօրինակ ծնողներու դաւակները իր գլուխը ժողոված, վըստահ էր որ պիտի կարենար անոնց մէջ պատաստել անգիւտ գոհար մը. ան ալ կ'ուզէր իր կարողութեան ներսը չափով իր ազգին ծառայել. և ճիշտ իր այս անօրինակ ոգիին բերմունքովն է որ զինքը ճանչնալու բարեբաղդութիւնը ունեցայ:

1912ին «Արտաւազը» Մարմն. միութեան խմբապետն էի. մեր անդամները գրեթէ ամբողջովին գոլէժականներ էին: Գալուստ իր ընկերներուն յառաջդիմութեանը սիրոյն, եկաւ ինձ գտաւ, ներկայացուց ինքզինքը և առաջարկեց որ իմ և իր «Որբանոց» «Արծի» խումբերուն մէջ միացում մը յառաջ բերենք, որպէսզի Գում Գարուի գրեթէ զպրոց չ'տեսած ազբատ երիտասարդութիւնը օգտուի մեր գոլէժական անդամներէն: Ասիկա փառասիրական առաջարկ մը չէր. այլ Գալուստին սակի սիրտն էր որ անխարդախ ձեռով մը ինքզինքը կը ծանօթացնէր: Խիստ գոհ էի ինձ տրուած այս օգտակար առիթէն: Որոշեցինք կազմել Վոսփորի «Արտաւազը Մարմն. Ակումբի «Կէտիկ-Բաշայի մասնաճիւղը: Այս վերջինին անդամները, Գալուստին առաջնորդութեան թ. աւելի կը սիրէին «Արտաւազը» քան անոր բուն անդամները: Տուրտ և ձիւնոտ օդերուն ես անոնց հետ առանձին գտնուած եմ «Արտաւազը»ի անունով կատարուած մրցումներուն, և որքան ուրախ կ'ըզարհէք Գալուստը որ գոլէժական մը կար իր որբուկներուն հետ, որը ի պահանջել հարկին պիտի կարենար իրեն օգնել մոռցնելու համար անոնց ցաւերը և մաքրելու անոնց արիւնը: Գանի, քանի՜ անգամներ ինձ է կը հարցնէր թէ՛ ինչ միջոցներով պիտի կրնար այդ անմեղ աղոց կարգ մը բնածին ունակութիւնները մոռցնել տայ և իմ քաջալերանքներովս թերեւ,

կարողացաւ աւելի օգտակար ըլլալ իր ազգակից-քաղաքակիցներուն:

Հանգուցեալի մը, մանաւանդ անէժքի հայկական խաշը կուրծքին վրայ կրելուն համար գլխատուածի մը յիշատակը յաւերժացնելու համար չէ որ միայն ես տկար գրչովս ներկայացուցի Գալուստը. ո՛չ, Անոնք որ Գալուստը ճանչցան, տաքցան անոր անկեղծ և սիրոյ գուրգուրանքներովը, պէտք է շարունակեն անոր սկսած գործը և ես վստահ եմ որ անոր ոգին հրեշտակային թեւերով պիտի գայ օրհնելու այս տարաբաղդ ազգին վերքերը դարձանելու նուիրուած Հայ ձեռքերը:

1914ին, պատերազմի հռչակումէն վերջ, երբ Հայութեան ճակատագրին խոր և արիւնոտ փոսերը անձեղներու դիակներով կը լեռնային, Գալուստը կը ղրկէին դէպի Տէր Զօրի անպատները: Իրաւունք ունէին. ազգային գործիչ մըն էր ան. անգիւտ գործիչ մը: Տարագրութեան չրջանին, Գալուստին աստղը աւելի փայլեցաւ. ան երբ Գոնիա կը գտնուէր, հոն իրեն պէս որք մը տեսաւ, հայուն օրտակից մէկ զաւակը, որ օտարներու ձեռքին մէջ տառջանքներով պիտի ստիպուէր ուրանալ իր ազգը և Աստուածը: Ազնիւ Գալուստը, չնայելով որ ինքն իսկ ուտելու չոր հաց մը չունէր, չունէր հանգիստ անկիւն մը իր գլուխը հանգչեցնելու, ամէն միջոցի դիմելով իր քով փախցուց այդ Հայ փոքրիկը. հետեւեալ օր, իր բաղդակից որբուկին սև հացի կտոր մը գնելու համար, գտաւ սափոր մը և գաւաթ մը, ու սկսաւ ծարաւահիւծ տարագիրներու ջուր ծախել. շահած մէկ քանի տասնոցներովը կրցաւ պահել իր որդեգրած որբուկը, մինչև որ օր մըն ալ Գոնիայէն Տէր Զօր տարագրուեցաւ, իր հետ տանելով որբուկը որ չէր ուզէր բաժնուիլ Գալուստէն: Ո՞վ գիտէ անոր սրդին ո՞ր տաք անկիւնը կ'ապրէր այդ մարդկութենէ իսկ մոռացեալ Հայ մարտիրոսագրութեան մասունքը:

Գալուստը Տէր Զօրի մէջ շատ քիչ տպրեցաւ. առաւօտ մը երբ իր ապաստանած տունէն դուրս կ'ելլէր մարդանման գաղաններու կեր դարձաւ, սուգի մատնելով զինքը ճանչցողները: Աւա՞ղ որ անոր մահուան գուժը մեզ հասաւ այն ատեն, երբ մեր աչքերուն մէջ արդէն արտասուքի կաթիլ մը իսկ չէր մնացած:

Հանգչէ՛ տաք աւազներուն, գուրգուրացած ազգիդ գերեզման անապատին մէջ, հէ՛ք Գալուստ: Զեր աճիւններուն սրբատեղին մեզ

ամէնուս յաւիտեանս պիտի մնայ անձանօթ :
 Բեզ հետ յաւիտենական քունի մէջ տառապող
 ներուն ըսէ թէ՛ հոս վերապրողները պիտի պա-
 տրաստեն հսկայ պծակ մը ձեր ամէնուզ գլխուն
 վրայ դրուելու համար և այդ պսակը լուսաւո-
 րող արևուն ճառագայթները Արարատի բար-
 ձունքներէն ժպտաչրթունք պիտի խայտացնէ
 ձեր անիւները, ու մեր հայրենիքին դաշտերը
 զովացնող զեփիւռին թևերուն վրայ Հայուն
 դրօշակը ալեծուփ մեզ պիտի պարտադրէ յար-
 գել ձեր ամէնուզ անմահ յիշատակը, որովհե-
 տեւ ձեր արիւնէն մեզի մաս տուիք, ներկե-
 լու համար մեր ազաւազրման կարմիր կնիքը :

Վ. Ս. Փ.



ՀԱՅԿ ԶՕԼՕԼԵՍԵՆ

ԱՌԻԻԾ ԽԱԶԻԿ ՎԱՆԵՑԻ

Որուն մասին Եզնիկ Բազունի կը գրէ
 Երեւանէն Վ. Չերազին:

«... Յաւերուդ վրայ հաս մըն ալ :
 Երեկ հողին յանձնեցինք մեր Վանեցի
 տղաներէն Առիւծ Խաչիկը, մեծ սրէքնօրը
 Յուրպօյր սգաւոր է. Բիւնօն շաս սխուր...
 միակ սիրելի տղան էր, բիւրեղի պէս
 մախուր գինուր էր :»

ՅԱՐԳԱՆՔ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՍԻՐԱՍՈՒՆ ԵՂՐՕՐՍ

Հ Ա Յ Կ Ի Ն

Անմոռանալի յիշատակին

Անձանօթ գերեզմանիդ առաջ ծնկաչոզ,
 դողդոջուն ու սրտատրոփ, ամէնէն լճիտ, ամէ-
 նէն անխառն արցունքներովս, կ'ուզեմ ցօղել
 հողակոյտդ՝ զոր չաղուած է կարմիր արիւնովդ,
 բայց ափսո՛ս, քու թանկագին կեանքիդ կո-
 րուստէն վերջ, շիրիմիդ վրայ արտասուելու փոք-
 րիկ միթթարութիւնը իսկ չկայ : Մահդ ինչ ձևի
 տակ ալ կատարուած ըլլայ, կեանքդ ինչ ձևով և
 որքան ալ շուտ վերջ գտած ըլլայ, դուն կ'տպրես
 ու յաւէտ պիտի ապրիս յանձին քու գաղափար-

ծնած է 1893ին. Նախնական եւ երկրորդական կրթ-
 ութիւնը առած է Էսաբան, Կեղղոնական եւ Արդի
 վարժարաններու մէջ, Մանուկ հասակէն նուիրուած է
 մարզական կեանքին, Մամուլորարար հետեւած է
 ֆութպօլի եւ դաշտային խաղերու, Եղած է պահ մը
 Արարսի եւ յետոյ Տօրքի ամէնէն եռանդուն անդամներէն
 մէկը, Մասնակցած է պատերազմէն առաջ տեղի ունե-
 ցող հայկ. ողիմպիական մրցումներուն, Գացած է Կարին
 խճուղիներու շինութեամբ գրադող ֆրանսական ընկերու-
 թեան մէջ իրրեւ երկրաչափի օգնական, Զօրահանու-
 թեան սկիզբը զինուորագրուելով իրրեւ երկրաչափի օգ-
 նական թրքական բանակին մէջ ծառայած է պահ մը
 Կարին եւ յետոյ Սերաստիա որ իր նմաններուն՝ 1700
 հոգիի հետ Շար Իրջլայի կոտորածին զոհ զնաց.

ներուդ, քու մաքուր իտէալիդ, իմ սրտիս, իմ
 հոգիիս ամէնէն խորունկ, ամէնէն աղփել ծալ-
 քերուն մէջ, Ես կ'ընթանամ այն ճամբէն զոր
 դուն գծեցիր կեանքիս ամէնէն անուշ, ամէնէն
 անհաստատ ու անտարրեր չըջանիս, պատանե-
 կութեանս միջոցին, գուցէ այդպէսով կը կա-
 տարեմ քեզի լաւագոյն հաճելի բանը, կը նու-
 իրուիմ ես ալ մարմնակրթմանքի որուն ջերմ
 պաշտող մըն էիր :

Բաց պահ մը աչքերդ և տես այն շարժու-
 մը, այն խանդավառ գործունէութիւնը որ ստեղ-
 ձուած է այդ գաղափարին շուրջ, որուն նուիր-
 ութեցար ամբողջ հոգւով և որուն կապեցիր շուր-
 ջըդ գանուող սիրելիներդ ու բարեկամներդ :

Եթէ կեանքդ ինկու այն քան շուտ, հոգիդ
 թող բարձրանայ երեւակայութեանս այն սահ-
 մանին մէջ, հեռու աշխարհիկ կեանքէն՝ մա-
 քուր ու եթերային բարձունքներուն մէջ, ուրկէ
 պիտի կրնայ լլալ՝ քու գծած ճամբուդ մէջ՝



ԵՐՈՒՍԵՎ ՆՇՍՆՅԱՆ

Մազրի-Գիւղի նախկին «Սասուն» մարմնամարզական միութեան հինադիր, որուն անխոչ ջանքերուն շնորհիւ «Սասուն» միութիւնը 1914ի միջազգային լիկին մէջ ճամբիոն հանդիսացած է, 207 զացած է շատ ցաւալի արկածի մը:

Եւանի անոնց որ իրենց մահուրնէ յետոյ անուշ եւ անմոռանալի յիշատակներ կը բոլուն: Այո՛, սարաբաղ ընկերներ: Ձեր յիշատակը մեր սրտերուն մէջ կը մնայ միշտ վառ, ձեր յոյսերը այսօր իրականացած են, բայց աւաղ... դուք չկաք այլեւս: Այո, ձեր յոյսերը կ'ըսեմ, վասն զի դուք ոգի ի բոլին աշխատեցաք զհիւղիս մէջ հիմնելու մարզարան մը, եւ ուղղութեամբ հազիւ քէ բաւական առաջացած վճայ հասաւ Ընդ. պատերազմը եւ անուրբ բազորը ձեզ ալ խլեց մեզմէ... մենք ձեր յաջորդները, այսօր աւելի ազատ սուպարեզի մը մէջ հիմնեցինք այդ մարզարանը ձեր յիշատակին: Հանգիստ ձեր ոսկորներուն...



ԳԼՈՐԳ ԳԵՐԷՍԷՆՆԱՆ

Մազրի-Գիւղի նախկին «Սասուն» մարմնամարզական միութեան հիմնադիրներէն եւ Փոթիպոլի երկաթ պէքը. — Ահա որ պատերազմի զոհերէն:

ՀՍԵՆԱՆ

կեանքիս լաւագոյն խորհրդատուն եւ առաջնորդող ուժը:

Եթէ դուն դադրած ես այսօր չօչափելի իրականութիւն ըլլալէ, քու յաւէտ սիրած ու յարգած ընկերներդ՝ Վահան Զերագներու, Եգնիկ Քաջունիներու վարապետներու շունչին տակ, կ'ըզամ որ կապրիս դեռ:

Թող որ անգամ մ' ալ մօտենամ ու խոնարհիմ անձանօթ ու սիրելի գերեզմանիդ առաջ եւ իմ ամէնէն անկեղծ ու սրտաբուխ տաք ու յորդանոս արցունքներովս, եղբայրական սիրոյ վերջին արտայայտութիւնս բերեմ:

Հանգիստ ոսկորներուդ ու յարգանք պաշտելի Շիրիմիդ:

ԳՐԻԳՈՐ ՀՕԼՕԼԵԱՆ

ԱԻՏԻՍՍ ԱՅՃԵԱՆ

Ծնած է 1892ին Արաքիւր: Նախնական եւ երկրորդական կրթութիւնը առած է Խարբերդի Ֆրանս. Գոյեճը. ուսկից շրջանաւարտ ելլելի վերջ եկած է Պոլիս եւ աւարտած օսմ. համալսարանի ուսողութեան ճիւղը 1914ին: Պատերազմի ընթացքին կը զտնուէր Պիթլիզ, իբր բուրժիսի ուսուցիչ: Հայկական հաշտման կէտերէն ի վեր իր մասին տեւե տեղեկութիւն չկայ:

Խարբերդի մէջ մասնակցած է մարզական շարժումին իսկ Պոլսոյ մէջ մասնակցելով Տօրֆ հայ մարմնամարզական միութեան, մեծապէս սաստիւած է մարզակնի եւ սքորի տարածման:

ՄԱՐՏԻԿ ՇԻՇՄԱՆԵԱՆ

1896-1917



ԶԱՐԲԱՅՐ-ՊՕՂՈՍ ԱՅՃԵՍԱՆ

Ծնած է 1897 Մարտ Սկիւտար Իճատիէ, Նախնական կրթութիւնը թաղին Ազգ Վարժարանին մէջ աւարտելէ վերջ յաճախեց՝ Նոր Դպրոց ուսկից շրջանաւարտ ելաւ 1914ին իբր վարժարանին առաջին եւ յաջողագոյն շրջանաւարտներէն մին. Սիրեց ու յարգեց իր դաստիարակները ու բոլոր ընկերները. Ինքն ալ փոխադարձաբար սիրուած էր իր ծանօթներէն. Ուշիմ աշխատասէր, պարտճանաչ, քաղաքավար, ազնիւ սիրտ ու հոգի կը կրէր եւ առարկնութիւններու մամլանցումն էր. Փոքր հասակէն միշտ իր տարիքին անհամապատասխան զարգացում ցոյց կուտար. Վարժարանին մէջ մասնաւոր յատկութիւն ցոյց տուաւ զեղարուեստի եւ մարմնակրթանքի. երկարատեւ մասնակցեցաւ Գովիտաս վրդի երգչախումբին եւ իբր ամաթէօն նկարիչ պրտադրեց լաւ նշկարներ. Աշակերտելով Գ. Շաւարշ Քրիսեանի, մաւնակցեցաւ Նոր Դպրոցի սկաուտական շարժման եւ մեծ դեր կատարեց. Վարժարանէն դուրս մասնակցեցաւ Տոբ համարմնամարզական միութեան.

Համաշխարհային պատերազմի առաջին տարին պաշտօնավարեց իբր ուսուցիչ Նոր Դպրոցի մէջ. Ապա թուրք բանակի մէջ ծառայեց իբր թարգման եւ մինչեւ Ռուսական սառնային լեռները գնաց. 1917ին նա վերադարձաւ Ֆիզիրապէս քայքայուած ու այլեւս չկարոնալով վերտանալ իր առողջ կազմը յախտնապէս բաժնուեցաւ իր սիրելիներէն.

Իր ետանքը եղաւ տիպար սկաուտի կեանքը. Իրեն ծանօթ ու անծանօթ սկաուտներն ու մարզիչները թող յիշեն անոր անուր քանի որ նա ակամայաբար մեկնեցաւ այժմ չգտնուիր Լ. Մ. Ը. Մ.ի մէջ. Ձիները մտաւն ճանչցողները թող բացատրեն անոր առարկնութիւնները իրենց ընկերներուն.



Ոչ աքսորի մը տաժանքներուն զոհ գնաց, ոչ կաղախանի վրայ կամ ետթաղանի բիրտ հարուածներու ներքեւ և կամ բանափ մէջ իր շունջը տուաւ, ոչ ալ կոխուներու ընթացքին հերոսացաւ աւազ: Մտաւոր ծանր աշխատութեանց հետեանք անողոք հիւժախտը իսկեց զինքը մեզմէ և ասոր համար իսկ իր կորուստին կսկիծը աւելի զօրաւոր է մեր սրտերուն մէջ: Մահէն դեռ քանի մը օր առաջ անդրդուելի «պիտի ապրիմ» իր ունէր իր շրթունքներուն վրայ մինչեւ վերջին վայրկեանը կուսեցաւ հիւանդութեան հետ յուսահատ յամառ կոխ մըն էր



ՄԱՐՏԻԿ ՇԻՇՄԱՆԵԱՆ

այդ, որուն սրտատրոփ և հիացումով հետեւեցանք այդ պայքարին ուժգնութիւնը կրնան հաշուել բոլոր անոնք որ իր կամքը ճանչցան. նախապէս զօրեղ կաշմուածքը տեղի տուաւ սակայն. ու գնաց տանելով իր վրայ դրուած այնքան յոյսեր. գնաց հազիւ թէ երեցած մեր մէջ, հազիւ ճանչցուցած իր ոսկի նկարագիրը, ընկերով մաքուր սիրտը ու առաջնորդի իր անթերի օրինակը:

1912 արձակուրդի շրջանին հետզհետէ մարմնամարդական խմբաւորում մը երեւան կու գար հոն էր ինքը, անոր դրած կորիզին մաս կը կազմէր. տարի մը վերջ Հայ Սկաուտներու առաջին երկու խմբակներէն միոյն առաջնորդը կըլ-

ԱՐԻԿ ԽԱՆՃԵԱՆ



Վ. Ա. ԱՐԻԿ. Վ. Ա. Ա. ԽԱՆՃԵԱՆ.

Բնիկ Հաճնցի, Տարսնի Ամերիկեան Գոլֆի բարձրագոյն կարգի ուսանողներէն եւ նոյն հաստատութեան մարմնամարզի ոգին, Հայ մարմնակրթական աշխարհին մէջ մեծ դեր մը պիտի խաղար, Արտորուելով Տէր-Զօրի մէջ նահապետուած է:

Իբր, քիչ յետոյ «Հայ-րդի» ներու ընկերակցութեան՝ ձեռնարկած հսկայ աշխատութեան կը նուիրուէր խանդավառուած լաւագոյն մարզարան մը շինելու գաղափարով՝ անսպաւելի եղելութիւն, նոյն այդ գետինը կը ծառայէ այսօր Հ. Մ. Ը. Մ. Ի Խնկիւտարի մասնաճիւղին, հոն Մարտիկին աշխատութիւնը կայ, հոն Մարտիկին շատ մը գործնական գաղափարներուն իրականացումը կայ, թէնիսի, պասքէթպօլի և ֆութթպօլի դաշտերը, իր բրիչին հարուածներուն ազդուութիւնը կը պատմեն մեզի ամէն օր ու մենք ամէն օր կը յիշենք զինքը. մտքով կ'ապրինք մեր աշխատանքի հին օրերը ամէնէն աննշան մանրամասնութիւններով իսկ և ի զուր կը փնտռենք զինքը մեր չուրջը. իր դըժբաղդ ընտանիքը — իր ընտանիքը մեծ էր սակայն զի կը հաշուէր իր բոլոր ընկերները, չը գիտցաւ միտիթարուի ոչ մէկ թանով. իր վշտակիր մօրը թեթեւացում մը պատճառէ թերեւս մեր ալ վիշտը անկեղծ և խորունկ:

ՆՆԵՐՍԷԱ ԱՍՏՈՒԱՆՈՒՅՆՆԵԱՆ

Սկիւտար



Եղած է Հայ Կղզիի առաջին սփորմէնը իբր Պր. Վահան Զերագի այդ բազուկը Կղզիին մէջ. սիրեց ու սուսածեց Քուր պօլն ու դաշտային խաղերը Աւա՛ղ սակայն որ 1909ին անողով հիւանդութեան ճիրաններէն չկրցաւ ձողուրիչ ու յարիստեանապէս բաժնուեցաւ իր սիրելիներէն: Իր անկէնդան մարմինը հանգչեցաւ կղզիի բարձունքը հոնկէց իր ոսկիրոսիքը կը խայտան, իր հետեւորդները յաղթանակներ կը սանկն վերջի-շերտով իրենց Ռահիվիւրան, Արիկը:

ՄԱՀԱՇԽԱՐՀ

Երբ աղգս կը սգայ և եղբայրներս ու քոյրերս իրենց սեւերուն մէջ ծրարուած, արտասուքի հեղեղներուն մէջէն ի զուր կը փնտռեն մեր անվերադարձ հոգեկիցներն, մեր կոյս ու անմեղ ազգակիցները, ես անկարող կ'ըզամ ինքզինքս անտարբեր մնալու համազգային այս ուխտի և սուգին առջև: Այո՛, ես չեմ կարող պրպտել այսօր օտար աշխարհներու, երջանիկ երկիրներու ներքև ապրող և պարողներու հետաքրքրական մանրամասնութիւններն, լաւագոյն է նայիմ ազգակիցներուս վրայ, զննեմ անոնց պէտք'ըր, պատրաստեմ անձիս մէջ սիւն մը, որուն թերեւս օր մը կուգայ կը կրթնի հայութեան ապագայ փայլուն յոյսերէն մին: Գողղոջուն ձեռքերով, թաց աչքերով, վարած սիրտով, կսկիծներով հիւժած կուրծքովս այսօր չեմ կրնար ծիծաղիլ մեր թշուառ կեանքին երեսին, որ կարծես Հայուն համար յաւիտենական անէծք մըն է դարձած:

Ինչ չար բաղդ, ինչ յուսահատեցուցիչ ճակատագիր: Մենք ափ մը վերապրողներս, գացող չվերադարձողներու ցաւերուն ծովեզերքը թառած, պահ մը ջանացինք զիրար միտիթարել, զիրար յուսադրել, իրարու դալկահար շրթունքներուն վրայ, նոր յոյսերու մշտաբող-

ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Հ. Մ. Բ. Մ.Ի ՄԱՄՆԱՃԻԳԵՐՈՒ ՄԻՋԵՒ



ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԳՈՐԵՍՆ
(ՕՎԻԿ)

Ռոպերթ Գօլէժի ուսանող: Ապագայ խոստացող ար-
չիք և լաւ ֆութպօլիստ: Զոհ գնաց թիֆլիսի:

բող ծիծաղի բոյներ ուղեցինք հաստատել...
Աւաղ որ սև ձեռքեր, այսքան մուրսրով լե-
ցուն կեանքի դառնագոյն բաժակն ալ մեղմէ
խնայեցին. ուղեցին մեր մէջ ջլատել ամէն ոյժ,
որան արմատը դրուած էր մայրական արի-
նաթաթախ կաթովը սնած՝ մեր սարկացած
կարծքերուն տակ. և կոծկերը՝ մեր նախաճայ-
րերու նոյիրական ժառանգ՝ կամքի անյաղթելի
սիւններուն պլլուած, գերեզմաններու մէջ իսկ
կ'ապրին, ուր լոյսը գողցեալ այնքան խաւար չէ
որքան մեր արտասուաթոր աչքերովը դիտուած
արեւը:

Այո՛, ազնիւ ցեղակիցներ, մենք ալ պար-
տինք դժբաղդաբար երբեմն ճնրադրել մեր տա-
րաբաղդ մարտիրոսներուն սուրբ յիրիմներուն
առջև, մեր արտասուքի աղամանդներովը պէտք
է զարդարենք անոնց գոհար յիշատակը, գնա-
հատենք անոնց անդարձ կորուստով մեզ համար
նոր բացուած բնդարձակ պարտականութեան մը
սահմանները, բնենք մեր բարի և ազնիւ խոս-
տումները աղօթքի թելերով անոնց ամենաքր-
բազան ածիւններուն առջև, ու բոլորս չարու-
նակենք մեր տեղային ասպետական արդիւն,
վեհանձն ժպիտով մը, մարդկային սկզբունքնե-
րու համաձայն գործելով:

Եթէ չհասկնանք մեր մեռելներուն յարգը,
պարզներուն նուիրականութիւնը չենք կարող
գնահատել:

Թող այս երկտողս ըլլայ վերջի տապանա-
կադիրս անթաղ ցեղիս յիրիմին:

Վ. Ս. ՓԱՓԵՋԵԱՆ

Թալիմնանէի հրապարակը

Ա. ՀԱՅ ԿՂՋԻ-ՎՈՍՓՈՐ

28 Մարտ 920

Խաղը սկսաւ որոշեալ ժամուն և անցաւ շատ կա-
նոնաւոր, երկու կողմերն ալ շնորհաւորելի եռանդով յա-
ռաջ վարեցին խաղը, Հայ-Գղզի ՅԱՂԹԱԳԱՆ ԵՂԱԻ 1Ի
ԴԷՄ 7 ԿՕԼՈՎ:

Դասաւոր

Օ. ՅՐԷՆԿԵԱՆ

Բ. ՍԿԻՍԵՐ-ՐԱԵՐԱ-ՇԻՇԼԻ

28 Մարտ 920

Խաղը սկսաւ 11,50ին Թագսիմի Մարգաւայրին մէջ:
Բերա Շիշլի յաղթական հանդիսացաւ ՕԻԴԷՄ 5 ԿՕԼՈՎ,
Սկիւտար հակառակ պարտուելուն գնահատելի էր
իր կողովը մինչև վերջ վառ պահելը:

Խաղի միջոցին, վիճարանելու հին սովորութիւնէն
հրաժարիլ կը խնդրուի առ հասարակ մեր ֆութպօլիստ-
ներէն, ու մասնաւորապէ՛ս մեր Շիշլիի ընկերներուն
մէկ քանիններէն:

Տ. ԽՈՅԵԱՆԻ

Փոխ. Դասաւոր

Կ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՍանսրէՖանօի մէջ:

Դ. ՄԱՐԵՐԳ-ԻՐԿ-ՍԱՄԱԹ-ԻՍ.

4 Ապրիլ 920

Խաղը սկսաւ ժամը յիշտ 3ին, երկու կողմերն ալ
եռանդով խաղացին, բայց խաղը անկանոն անցաւ, Սա-
մաթիոյ խումբը շատ անտեղի շարժումներ կ'ընէր և
յաճախ ալ դատաւորին զիտողութիւններ ընելէ չէին
զաղրեր՝ միեւնոյն ատեն աշխատելով պատասխանել հան-
դիսականներու զիտողութիւններուն, Սակայն խոստովա-
նինք որ Սամաթիոյ պէհին լրջութիւնը ու պաղարիւնու-
թիւնը գնահատելի էր:

Մարքի Գիւզի խաղացողներն ալ պզտիկ թերութիւն-
ներէ գերծ չէին:

Պ. Շապրեանի փոխամորդաբար

Դասաւոր

Ս. ՊԱՊԻԿԵԱՆ

Խմբագիր	Արտօճատէր	Պատասխանատու-Տնօրէն	Տպագրութիւն
ԿԱՐՕ Պ ՈՒՇԱԳԼԵԱՆ	ԳԱՌԼՕ. ԵԱԶԻՆԵԱՆ	ՀՐԱԶԵԱՅ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ	Ց Ո Ր Զ Ո Ւ Մ Ա Ն